

**Հ. ՄԻՔԱՅԷԼ ՉԱՄՉԵԱՆԸ**  
**ՈՐՊԷՍ ԱՆԱՊԱԿ ԲԱԺԱԿԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ**  
**ՍՐԲԱԶԱՆ ԱԻԱՆԴՈՒԹԵԱՆ ԶԱՏԱԳՈՎ**

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու գործնական ծիսական կեանքի ուղղադրաւ եւ եզակի աւանդութիւններէց է անապակ բաժակի՝ անխառն գինու, գործածութիւնը Ս. Պատարագի ժամանակ<sup>1</sup>: Հայկական սկզբնաղբիւրների միաբերան վկայութեան համաձայն՝ այս սրբազան աւանդութիւնը հաստատել է մեր հաւատքի հայր Ս. Գրիգոր Լուսաւորիչը՝ վերցնելով այն Ս. Հաղորդութեան բաժակի վերաբերեալ վաղ Եկեղեցում կենցաղավարած աւանդութիւններից՝ հաշուի առնելով նաեւ անապակ գինի խմելու հայերի վաղնջական սովորութիւնը: Ծիսաստուածաբանական այս հիմնախնդիրը դարերի ընթացքում ստացել է նաեւ իր աստուածաբանական, կրօնափիլիսոփայական եւ խորհրդաբանական հիմնաւորումները, որոնք շարադրուած են Հայոց Եկեղեցու հայրապետների ու վարդապետների հակաճառական, ջատագովական երկերում եւ ամրագրուած են կանոնական որոշումներով: Անապակ բաժակի կիրառումը մեր Եկեղեցու աստուածապաշտութեան մէջ բազմիցս քննարկման նիւթ եւ կռուախնձոր է եղել նաեւ միջեկեղեցական յարաբերութիւնների եւ աստուածաբանական երկխօսութիւնների ժամանակ՝ գիջելով միայն քրիստոսաբանական վէճերին:

Անխառն գինու սրբազան աւանդութիւնը մի հիմնահարց է, որով Հայոց Եկեղեցին տարբերուում է քրիստոնէական միւս բոլոր Եկեղեցիներից՝ միեւնոյն ժամանակ մնալով Ընդհանրական Եկեղեցու անբաժանելի մէկ մասը: Խնդիրն իսկապէս հետաքրքիր է եւ արժանի ուղադրութեան, քանզի Ս. Հաղորդութեան խորհրդ-

---

1 Խնդրի մասին մանրամասն տե՛ս ԲԱՂՈՒՄԵԱՆ, Զ. ՎՐԴ., *Անապակ բաժակի խնդիրը Հայոց Եկեղեցում*, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին 2013, 21-156:

դուժ ջրախառն գինի են օգտագործում նաեւ Հայոց Եկեղեցուն դաւանակից՝ Ղպտի, Ասորի, Հնդիկ Մալանկարայ եւ Եթովպիայի Ուղղափառ Եկեղեցիները, թէպէտ նրանք էլ մեզ նման չեն ընդունում 451 թ. Քաղկեդոնի ժողովի որոշումները՝ հաւատարիմ մնալով առաջին երեք Տիեզերաժողովների ուղղափառ դաւանութեանը: Չպէտք է մոռանալ, որ չնայած ծիսական այս եւ միւս տարբերութիւններին, Հայոց Եկեղեցին հաղորդական միութեան մէջ է նրանց հետ: Հետեւաբար, Ս. Հաղորդութեան ծէսում անապակ բաժակի գործածութիւնը մէկ անգամ եւս չեչտում եւ ցոյց է տալիս աստուածաբանական, սուրբգրային այս կամ այն տեղիի մեկնաբանութեան եւ որոշ խնդիրների շուրջ Հայոց Եկեղեցու ինքնատիպ կեցութեան ու աստուածաբանական մտածողութիւնը, քրիստոնէական ընդհանրական ծէսի ազգայնացման եւ տեղայնացման օրինակներից մէկը Հայոց աշխարհում:

Անապակ բաժակի խնդրի հետ կապուած անհրաժեշտաբար պէտք է տարբերակել հարցի ծիսապատմական եւ ծիսաստուածաբանական կողմերը: Առկայ փաստերի համադրութիւնն աներկբայ վկայում է, որ ծիսապատմական առումով Հայոց Եկեղեցում միշտ անապակ գինի է օգտագործուել, չնայած չի բացառում նաեւ, որ տարբեր ժամանակաշրջաններում, ազդուած լինելով յոյներից կամ լատիններից, որոշ վայրերում գործածել են նաեւ ջրախառն գինի: Բայց նմանատիպ երեւոյթները տեղային բնոյթ են կրել եւ կանխուել են Հայոց Եկեղեցու ժողովական-կանոնական որոշումներով եւ թեմային առնչուող հայրապետների կամ վարդապետների գրութեանների շնորհիւ:

Պատմական փաստերի վերլուծութիւնը փաստում է նաեւ, որ մինչեւ Քաղկեդոնի ժողովը, երբ Քրիստոսի Եկեղեցում իշխում էր միութեան ոգին եւ տարբեր աւանդութիւններ ունեցող Եկեղեցիները միմեանց հետ կիսում էին Ս. Հաղորդութիւնը, ինչպէս աստուածաբանական, այնպէս էլ գործնական տեսանկիւններից չկար այս խնդիրը, թէպէտ այդ շրջանում էլ հայերն անապակ գինով էին պատարագում, իսկ միւսները՝ ջրախառն: Անապակ կամ ջրախառն բաժակի խնդիրը տարբերակման եւ վէճի առարկայ է դառնում այն ժամանակ, երբ գործնական ծիսական կեանքը ստանում է աստուածաբանական եւ իմաստասիրական հիմնաւորումներ, որոնց արդիւնքում էլ ի յայտ են գալիս իրարամերձ կարծիքներ եւ տեսակէտներ: Բնականաբար, խնդրի քննարկման ժամանակ ամէն Եկեղեցի փորձում է ապացուցել Ս. Հաղորդութեան խորհրդում ծիսական իր սովորութեան ճշմար-

տացիութիւնը՝ հիմք ընդունելով Աստուածաշունչ մատեանը, խնդրին առնչուող սուրբգրային որոշ հատուածների մեկնութիւնները, տուեալ Եկեղեցու աստուածաբանական մտածողութիւնը եւ տարբեր ժողովուրդների կենցաղում ամրագրուած գիւնի խմելու սովորութիւնները: Հայ մատենագրութեան եւ յատկապէս աստուածաբանական ժառանգութեան մէջ նոյնպէս զանազան առիթներով տարբեր դարաշրջաններում քննարկուել է ծիսական այս սովորութիւնը: Եւ մեր մատենագիրներն ու եկեղեցական հեղինակներն իրենց գրուածքներում ոչ միայն ջատագովել եւ փաստել են Հայոց Եկեղեցու անապակ բաժակով պատարագելու սրբազան աւանդութիւնը, այլեւ տուել զրա տեսական եւ գործնական հիմնաւորումները:

Աստուածաբանական, փիլիսոփայական, պատմագիտական եւ Ս. Գրքի մեկնութեան տարբեր խնդիրների նորովի արծարծմամբ է առանձնանում ԺԸ. դարը, երբ պատմութեան ասպարէզում են յայտնուում այնպիսի նշանաւոր ազգային-եկեղեցական գործիչներ եւ պատմագիրներ ինչպիսիք են Յակոբ Նալեանը (1706-1764), Սիմէոն Ա. Երեւանցին (1763-1780), Պետրոս արք. Բերդումեանը († 1787), Ալեքսանդր Ա. Զուղայեցին (1706-1714), Գէորգ Մխլայիմը (1681-1758), Եսայի Հասան Զալալեանը († 1728), Աբրահամ Կրետացին († 1737), Խաչատուր Զուղայեցին, Մխիթար Սեբաստացին (1676-1749) եւ ուրիշներ: Լուսաւոր այս փաղանգի լաւագոյն ներկայացուցիչներից է նաեւ Մխիթարեան միաբանութեան անդամ, պատմաբան, աստուածաբան, մեկնիչ, քերականագէտ, մանկավարժ եւ հասարակական-մշակութային գործիչ Հ. Միքայէլ Չամչեանը (1738-1823)<sup>2</sup>, որի մատենագրական վաստակը եւ յատկապէս աստուածաբանական երկերը կարիք ունեն խորագնին ուսումնասիրման եւ նորովի արժեւորման:

Հ. Միքայէլ Չամչեանն անապակ բաժակի խնդրին հիմնականում անդրադարձել է «Վահան հաւատոյ» կոթողային երկում,

2 Հեղինակի մասին տե՛ս ՄԱՂԱՔ-ԹԵՆՓԻԼԵԱՆՑ, Մ., *Կենսագրութիւն երեւելի արանց*, հտ. Ա., Վեներիկ 1839, 811-813, ՃԵՄՃԵՄԵԱՆ, Հ. Ս., Հ. Միքայէլ Չամչեան եւ իր Հայոց Պատմութիւնը, «Բազմավէպ» 1981, քիւ 3-4, 300-355, ՈՒԹՈՒՋԵԱՆ, Ա., Միքայէլ Չամչեան կեանքը, գործը, Երեւան 2019, 3-99, ՈՒԹՈՒՋԵԱՆ, Ա., Միքայէլ Չամչեան (կեանքի եւ գործունէութեան համառոտ ուրուագիծ), «Լրարբեր հասարակական գիտութիւններ», 1988, քիւ 9, 71-85, Քրիստոնէայ Հայաստան հանրագիտարան, Երեւան 2002, 840-841:

ինչպես նաեւ եռահատոր «Հայոց պատմութեան» աշխատութիւնում եւ Սաղմոսաց գրքի ընդարձակ մեկնութեան համապատասխան հատուածում: Զամչեանի դաւանաբանական «Վահան հաւատոյ» աշխատութիւնն ուղղուած էր կաթոլիկ քարոզիչների եւ նրանց ջերմեռանդ պաշտպան հայ լատինամոլների դէմ, որոնք «բանիւֆ ստութեան եւ խարդախութեան զագգն ողջոյն պղտորեն, երկպառակութիւն ի մէջ արկանեն, եւ խոռվութեամբ լնուն, եւ զոմանս ի ծանր ծանր վնասս մատնեն»<sup>3</sup>: Հեղինակը քաջ գիտակցում էր, որ դաւանանքով բաժանուած հայուծիւնը մեծապէս տուժելու էր լատինամոլների որդեգրած ազգակործան քաղաքականութեան պատճառով: Ուստի սոյն երկասիրութեամբ նա փորձում էր ստեղծել գաղափարական այն հիմքը, որ միաւորող դեր կունենար, կը վերացնէր ներքին երկպառակութիւնը եւ կը հաստատէր խաղաղութիւնը՝ հային վերադարձնելով իր ազգային ինքնութեան գիտակցութիւնը<sup>4</sup>:

Նա տասը գլուխներից բաղկացած այս երկասիրութեան մէջ մէկ առ մէկ հերքում է Հայոց Եկեղեցուն ներկայացուած կարծեցեալ տասը մոլորութիւնները՝ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին ներկայացնելով իբրեւ ուղղադաւան: Նկատի պէտք է ունենալ, որ Զամչեանն «ուղղափառութիւն» եզրոյթն այստեղ գործածում է իբրեւ համարժէք հռոմէադաւանութեան: Շեշտելով Հայոց Եկեղեցու ուղղափառ լինելը եւ ընդդիմանալով նրան տրուած «հերետիկոս» կամ «հերձուածող» բնորոշումներին՝ հեղինակը փաստօրէն քննադատում էր Վատիկանի պաշտօնական այն տեսակէտը, ըստ որի միայն Հռոմէական Կաթոլիկ Եկեղեցին է ուղղափառ: Այս տեսանկիւնից նրա համար հայ ժողովրդի յուսաւորչական եւ կաթոլիկ հատուածները հաւասարապէս դիտւում էին որպէս ուղղափառ: Սա նշանակում էր նաեւ, որ Հայոց Եկեղեցին Կաթոլիկ Եկեղեցու նման Ընդհանրական Եկեղեցու անբաժանելի մասն է՝ իրաւագոր եւ համահաւասար: Ուստի խօսք լինել չէր կարող որեւէ Եկեղեցու գերիշխանութեան կամ առաջնայնութեան մասին:

Զամչեանի «Վահան հաւատոյ» աշխատութեան է. գլուխը՝ «Յաղագս սրբոյ բաժակին ընդ բանի անապակ կամ ջրախառն մատուցանելոյ», ամբողջութեամբ նուիրուած է մեզ յուզող խնդրին,

3 ԶԱՄՁԵԱՆ, Չ. Մ. Վրդ., Վահան հաւատոյ ուղղափառութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ, Կալկաթա 1873 (այսուհետ՝ Վահան հաւատոյ), 34:

4 ՈՒԹՈՒՋԵԱՆ, Ա., Միջայէլ Զամչեան կեանքը, գործը, 50-76:

*որում ուսումնասիրողը հիմնադրում է Հայոց Եկեղեցու անխառն գինով պատարագելու սրբազան աւանդութեան խնդիրները՝ քննութեան ենթարկելով հակառակ կողմի տեսակէտները եւ ի ցոյց դնելով մեր մատենագրութեան մէջ պահպանուածները: Յաւոք, մենք ձեռքի տակ չենք ունեցել այս աշխատութեան ընդարձակ տարբերակը եւ բաւարարուել ենք Կալկաթայի համառօտուած տպագրով, որ թերի է եւ անբաւարար<sup>5</sup>:*

- 5 Հ. Միքայէլ Չամչեանը դաւանաբանական այս աշխատութիւնը (շուրջ 1000 էջ) գրել է 1776-1815ի ընթացքում Կ. Պոլսի լուսաւորչական եւ կաթոլիկ համայնքների միջեւ ծագած կննդոս խնդիրները հարթելու նպատակով: Փաստօրէն շուրջ 40 տարի հեղինակն աշխատել է այս գործի վրայ՝ միաժամանակ գրելով մէկ այլ կարեւոր աշխատասիրութիւն՝ «Հայոց պատմութիւն»ը: 1816ի Փետրուարի 25ին Հ. Մկրտիչ Աւգերեանին եւ Հ. Իգնատիոս Փափագեանին գրած իր նամակում Չամչեանը հաւաստիացնում է, որ գրեթէ աւարտել է աշխատանքը, բայց չի շտապում «հանել ի վեր, քանզի պատրաստեալ էի ուղղագրել եւ կատարելագործել գնոյն» (Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 9842, էջ 220): Չամչեանի այս զգուշաւորութիւնն ամենեւին էլ անտեղի չէր. նրա հակառակորդներն ամէն կերպ ցանկանում էին ձեռք բերել այն՝ ի ցոյց դնելու համար հեղինակի սխալ դատողութիւններն ու եզրայանգումները: Ուստի Չամչեանն այս աշխատութիւնը խնամքով պահում էր առանձին՝ յատուկ արկղում: 1815ի Մարտի 4ին Անտոնեան միաբանութեան անդամ Հ. Պօղոս Փասիասեանին յաջողում է գողանալ այն: Նախֆան Վատիկան յանձնելը, կոլեժցիներն ընդօրինակում են գրքի համառօտ բովանդակութիւնը: Հռոմի հաւատաւնական գերագոյն ատեանի 1819 Մայիսի 5ի որոշմամբ այս աշխատութիւնը համարուել է հերետիկոսական եւ ոչնչացուել: Բայց 1817 Օգոստոսին Աղա Յարութիւն Պեգեանին (1771-1834) յաջողում է մեծ գումարով գնել գրքի համառօտ տարբերակը: Ապա Պօղոս արկ. Կոստանդնուպոլսեցին 1823ին Կիպրոսում՝ Փետրուարին, ընդօրինակում է այն՝ նուիրելով Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին (Երուսաղէմի մատենադարան, ձեռ. 409. նկարագրութիւնը տե՛ս ՊՈՂԱՐԵԱՆ, Ն. Եպս., Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Բ., Երուսաղէմ 1967, 345-346): Հետեւաբար, «Վահան հաւատոյ»ի ձեռագիր յետագայ բոլոր ընդօրինակութիւնների եւ Կալկաթայի տպագրի հիմքը վերագրեալ ձեռագիրն է: Բնականաբար, տպագիրը խիստ համառօտուած է եւ չի արտայայտում մայր օրինակի բովանդակային ամբողջութիւնը: Չնայած մասնագիտական գրականութեան մէջ շրջանառուող Չամչեանի աշխատութեան ընդարձակ տարբերակի կորած լինելու տեսակէտին, մեր ունեցած հաւաստի տեղեկութիւններով Միքայիսեանի միաբանութեան անդամ

*Հեղինակն աշխատութեան է. գլխում պատասխանում է ընդդիմախօսների երեք հարցերին. նախ՝ արդեօ՞ք հայերն իրենք են այս սովորութիւնը հնարել, երկրորդ՝ արդեօ՞ք Մանագլերտի կամ Դուլինի ժողովին են սա հնարել՝ որպէս մոլորութեան նշան, եւ երրորդ՝ արդեօ՞ք հայերը մերժում են պատարագի գինու մէջ ջրի խառնման հակառակ սովորութիւնը:*

*Պատասխանելով առաջին հարցմանը՝ Հ. Միքայէլ Զամ-  
չեանն այն դիտարկում է հետեւեալ համատեքստում. հայերն ի  
սկզբանէ քրիստոնէութեան ընդունումից յետոյ գործածե՞լ են ա-  
նապակ բաժակ, թէ՞ յետոյ են ծիսական այս սովորութիւնը ներ-  
մուծել: Նրա համար շատ յստակ է, որ հետաքրքրուողներն այս  
հարցի պատասխանը պէտք է փնտռեն ոչ թէ օտար սկզբնաղ-  
բիւրներում կամ հեղինակների մօտ, այլ հէնց հայկական սկզբնաղ-  
բիւրներում եւ հայ մատենագիրների երկերում. «Ապա հարկ է  
խոստովանիլ, թէ որք խնդրեն զծագումն սովորութեան հայոց վասն  
անապակ բաժակի, պարտին դիմել ի վկայութիւն ազգիս Հայոց, քան  
օտարաց: Պնդեմք եւ եւս զայս դրութիւն, որով նախապաշարի ամե-  
նայն փախուստ հակառակորդաց: Ոչ կարէ ոք յիմաստուն աստուա-  
ծաբանից պահանջել ի մէնջ, թէ վկայ ի մէջ ածէ՛ք առ ի ցոյց հնու-  
թեան անապակ բաժակի գլատին հեղինակ կամ գնոյն, կամ գԱսո-  
րի, կամ զխուժ, կամ զդուժ եւ այլն»<sup>6</sup>: Ապա ուսումնասիրողը յա-  
ւելում է. «Վասն զի այս ազգ ոչ են ի մասնէ ժողովրդեան, զոր  
դարձոյց սուրբ Գրիգոր Լուսաւորիչ հայաստանեայց ի հաւատս  
Քրիստոսի, որպէս զի մարթսացեն գիտել, թէ զիա՞րդ աւանդեալ ի-  
ցէ Լուսաւորիչն զգործածութիւն սուրբ բաժակի, զի թէ եւ իմաս-  
տունք ունանք օտար ազգի աւանդութիւն արտաբոյ ելանէ, քան*

---

*Հ. Գրիգորիս Վրդ. Սիրանեանը վերջերս յայտնաբերել է Զամչեանի այս  
աշխատութեան ամբողջական տարբերակը, որն էլ պատրաստում է հրա-  
տարակութեան՝ ընդարձակ ուսումնասիրութեամբ եւ ծանօթագրութիւն-  
ներով: Մեզ հետ զրոյցի ժամանակ Հ. Գրիգորիս Վրդ-ը խուսափեց աշ-  
խատութեան յայտնաբերման մանրամասները ներկայացնելուց եւ չքոյաւո-  
րեց գրքի մեզ հետաքրքրող հատուածն ընթերցել՝ խոստանալով մօտ ա-  
պագայում ընթերցողի դատին յանձնել սոյն աշխատութիւնը: Վստահ  
ենք, որ այս երկի ամբողջական տարբերակի պատշաճ հրատարակութիւ-  
նը լոյս կը սփռի գիտութեանը յուզող բազում հարցերի վրայ. տե՛ս  
նաեւ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Մ. - ԹԱՋԻԲԵԱՆ, Է., Հայագիտական նիւթերը Վա-  
տիկանի արխիւներում. «Պատմա-քանասիրական հանդէս» 1997 (1), 117:*

6 Վահան հաւատոյ, 42:

գսահման իմաստութեան նոցա, ապա հարկ է ի նմին իսկ ազգէ տեղեկանալ զաւանդութիւն ազգին, այսինքն՝ զծագումն սովորութեան անապակ բաժակի»<sup>7</sup>։ *Չամչեանի հայեցակարգային այս մօտեցումն իսկապէս արդարացի է, քանզի խնդրի վերաբերեալ օտարալեզու մի քանի յօդուածները կամ ականարկները ցոյց են տալիս, որ ուսումնասիրողները մեծաւ մասամբ հաշուի չեն առել հայկական սկզբնաղբիւրները կամ դրանք մեկնաբանել են իւրովի՝ չփորձելով ըմբռնել անապակ բաժակի մասին Հայոց Եկեղեցու ծիսական աւանդութեան ներիմաստները եւ իրական պատճառները։ Քանզի նոյն ձեւով կարելի է չընդունել նաեւ Ջրախառն գինով պատարագելու միւս Եկեղեցիների աւանդութիւնը, որն էլ նրանց համար է կարեւոր եւ սուրբ։ Ուստի Չամչեանը եւս մէկ անգամ հաստատում է, որ հայերն անապակ բաժակ են գործածել Հայոց մեծ դարձից յետոյ՝ այս աւանդութիւնն ընդունելով Ս. Գրիգոր Լուսաւորչից, ինչպէս որ վկայում են հայկական սկզբնաղբիւրները<sup>8</sup>։ «Այլ մեք գայս մի ինչ նշարտութեամբ կարեմք ասել, թէ սուրբ Լուսաւորիչն մեր, որպէս եւ եգիտ ի Յոյնս բնակեալս ի Կեսարիա, այնպէս եւ աւանդեաց ի Հայս, քանզի անհաւատալի իմն երեւի, թէ այլազգ իցէ կարգեալ նա, քան զոր տեսեալ էր ի Յոյնս», - իրաւամբ եզրակացնում է Չամչեանն իր «Հայոց պատմութեան» մէջ<sup>9</sup>։ Սրանք կարեւոր շեշտադրումներ են, քանզի շեղումը Ս. Գրիգորի հաստատած Աւանդութիւնից համարուել է հեռացում ուղղափառութիւնից եւ սուրբ հայրերի ճշմարիտ հաւատքից։ Ուստի ամենեւին էլ պատահական չէ, որ հեղինակն այստեղ յիշատակում է նաեւ Մանագիւրտի (726) հայ-ասորական միացեալ եկեղեցական ժողով, որի Լ. կանոնը յստակ սահմանում էր. «Արժան է զհացն անխմոր եւ զգինին անապակ հանել ի սուրբ սեղանն ըստ աւանդելոյ մեզ սրբոյն Գրիգորի եւ չիտնարիւն յայլ ազգաց քրիստոնէից յաւանդութիւնս, զի սուրբ Լուսաւորիչն յարիմականէն բերեալ գայս առաքելաբար հրաման ետ կատարել իւրոյ վիճակելոցն... եւ մեզ ի նմին պարտ է յարամնալ եւ չթողուլ եւ ի բաց, եւ*

7 Անդ։

8 Հետաքրքրական է, որ 1987ին Վատիկանը թոյլատրեց հայ կաթողիկոսներին վերադառնալ նախկին սովորութեանը եւ նորից անապակ գինով պատարագել, ինչն էլ փաստում է Հռոմէակաթողիկ եկեղեցու կողմից անապակ բաժակի Հայոց եկեղեցու սրբազան աւանդութեան ընդունումը։

9 ԶԱՄՁԵԱՆ, Հ. Մ., *Պատմութիւն հայոց*, հտ. Բ., Վեներտիկ 1785, 646, ԲԱՂՈՒՄԵԱՆ, Զ. Վրդ., *Անապակ բաժակի...*, նշ. աշխ., 55-79։

չառնել նորաձևս ինչ»<sup>10</sup>: *Ինչպէս տեսնում ենք, Ս. Յովհան Օճնեցին յորդորում է նաեւ նորաձեւ բաներ չանել Ս. Հաղորդութեան ծէսում, այլ հաւատարիմ մնալ լուսաւորչաւանդ սրբազան աւանդութեանը: Կանոնական այս որոշումը դարերի ընթացքում հրամանակարգ վարդապետութեան բնոյթ է ստացել մեր աստուածաբանական մտածողութեան մէջ եւ դարձել հզօր կռուան անապակ բաժակի Հայոց Եկեղեցու սրբազան աւանդութիւնը ջատագովելիս, որ վկայակոչել են խնդրին անդրադարձած գրեթէ բոլոր հայ մատենագիրներն ու վարդապետները<sup>11</sup>: Պէտք է փաստել, որ եթէ հայկական սկզբնաղբիւրների համաձայն Ս. Յովհան Օճնեցին Հայոց աշխարհը մաքրեց քաղկեդոնական աղանդից, ապա լատինամէտներն այստեղ տեսնում են չեղում ճշմարիտ հաւատքից, անխառն գինով պատարագելու աւանդութեան ներմուծում հայկական ծէսում, ինչպէս նաեւ հեռացում Հռոմի Եկեղեցուց եւ մերժում Քրիստոսի երկու բնութեան վարդապետութեան<sup>12</sup>: Մասնաւորապէս կաթողիկ քարոզիչ Կղեմէս Կալանոսն այս մասին գրում է. «Յոհան Օճնեցի երարց գայս ուղղափառ աւանդութիւնս ի միջոյ հայոց եւ կամելով ի բաց բառնալ ի նոցանէ զամենայն յիշումն եւ նշանակութիւն երկուց բնութեանցն Քրիստոսի հրամայեաց նոցա ոչ խառնել յայնմհետէ զշուրմ ի գինի սուրբ խորհրդոյն»<sup>13</sup>: Նկատի ունենալով վերոբերեալ մտածողութիւնը՝ Հ. Միքայէլ Չամչեանն անողոք քննադատում է այսպիսիներին՝ ընդգծելով, որ նրանք ծանօթ չեն հայ պատմիչների վկայութիւններին եւ հայկական սկզբնաղբիւրներին, ինչպէս նաեւ հայոց լեզուին ու ծիսական նրբութիւններին, որի պատճառով էլ եզրակացութիւնները ճիշտ չեն եւ թերի են:*

10 ՅԱԿՈԲԵԱՆ, Վ.(աշխ.), *Կանոնագիրք հայոց*, հտ. Ա., Երևան 1964, 519:

11 ԲԱՂՈՒՄԵԱՆ, Զ. Վրդ., *Անապակ բաժակի...*, նշ. աշխ., 59:

12 1341 թ. Ներսէս Պալիեցն Աւինիոնում Հռոմի Բենեդիկտոս ԺԲ. պապին է ներկայացնում 117 կէտից բաղկացած մի ցուցակ, որի 110-րդը վերաբերում էր հայոց «մոլորական» գրքերին: Այստեղ յիշատակում է նաեւ Ս. Յովհան Օճնեցին: Հակաօճնեցիական իրենց ատելութեամբ առանձնանում են նաեւ ԺԵ. դարի հայ միաբարներ Հերոնիմոս Լեհացին եւ Գրիգոր Ուրախ Կարնեցին. տե՛ս ԱՆԱՍՏԱՆ, Յ., *Հայոց մոլորական համարուած գրքերն ըստ լատինական մի հին ցուցակի*, «Էջմիածին» 1975 (Ժ), 31-32: Օճնեցու վերաբերեալ Չամչեանի տեսակէտի մասին տե՛ս ԵԶԵԿԵԱՆ, Ա., *Դուիմի 719թ. ժողովի պատմականութեան խնդիրը*, «Էջմիածին» 2018, է., 51-54:

13 ԿՂԵՄԷՍ ԿԱԼԱՆՈՍ, *Միաբանութիւն Հայոց Սուրբ Եկեղեցւոյն ընդ Մեծի Սրբ. Եկեղեցւոյն Հոռովայ, հտ. Բ., մաս Ա., Հոռմ 1658, 442-443:*

Հայ եկեղեցական մատենագրութեան մէջ շրջանառուել է նաեւ այն տեսակէտը, որ սկզբնական շրջանում կաթողիկոսները նոյնպէս անապակ գինով են պատարագել եւ միայն յետոյ են փոխել ծիսական իրենց սովորութիւնը: Մասնաւորապէս միջնադարեան նշանաւոր վարդապետարաններից մէկի՝ Գլաձորի համալսարանի հիմնադիր ընդունապետ Եսայի Նչեցին «Առ Տէր Մատթէոս» խորագրով թղթում արձանագրում է. «Եւ զայս մի՛ անգիտանայք, եղբա՛րք, զի Հայաստանեայցս կրօնք եւ աւանդութիւն ո՛չ խորթ է եւ կամ եկամուտ ոք յաննշանից բերեալ, այլ՝ յԱռաքելոցն եւ ի Հարցն արքոց ի մեզ եկեալ: Թէ զոսն ծննդեան եւ յայտնութեանն Քրիստոսի Աստուծոյ տօնեմք ի Յուն վարի վեց, եւ եթէ անապակ բաժակաւ զխորհուրդն մեղսաբաւիչ պատարագին կատարեմք, զի յառաջ այսպէս ունէին ամենայն եկեղեցիք Քրիստոսի: ... Նոյնպէս եւ զջրին խառնումն յետոյ ընկալան ի ժամանակս պապուն Ադեկսանդր կոչեցեալ»<sup>14</sup>:

Բնականաբար, մատենագրական այս տեղեկութեանը քաջածանօթ է նաեւ Հ. Միքայէլ Չամչեանը: Փաստական նիւթի քըննական վերլուծութեամբ նա յանգել է հետեւեալ եզրակացութեանը. «Յուցանի ի սահմանադրութենէ Աղեփսանդրի Պապին, թէ ի սկզբան եկեղեցւոյ գոյր սովորութիւն անապակ բաժակի: ... Հռովմէական սուրբ եկեղեցի ի կատարելն գլխատակ արքոյն Աղեփսանդրի պապի, որ նստաւ ի սկիզբն Բ դարուն յամի Տեառն 109 կամ ըստ ոմանց 121 եւ փառաւոր նահատակութեամբ կատարեցաւ, առաջի դնէ հաւատացելոց ինչ ինչ բարեկարգութիւնս, զորս սահմանեալ է նա ինքն Աղեփսանդր փառնայապետ եւ զլիաւորն ի միջի այնոցիկ է այս, զի սահմանեալ է խառնել ջուր ի գինի բաժակին առ ի նշանակելոյ գերկնավտակ աղբերս, որ բոլիսցին ի կողից փրկչին: Քանզի գրի յընթերցուածն հռովմէական Պոէ վի առուին, այսինքն՝ ժամագրքին ի մայ. 3, այսպէս. «Այս սուրբ փառնայապետ Աղեփսանդր հրամայեաց զգինին խառնել ջրով, վասն արեան եւ ջրոյն, որ բոլիսցին ի կողէն Քրիստոսի Յիսուսի»»<sup>15</sup>: Այս ամենից Հ. Միքայէլ Չամչեանը եզրակացնում է, որ ջրախառնութեան սկիզբը դրել է Աղեփսանդր պապը. «Յորմէ զհետ գայ, թէ ուրեմն յառաջ քան զայն հրաման կամ բնաւ չկայր յեկեղեցւոյ սովորութիւն

14 Թուղթ Եսայեայ վարդապետի առ Տէր Մատթէոս, «Ճոռաբաղ», 1860, հտ. Բ, տետրակ Ժ, 163:

15 Վահան հաւատոյ, 45-46:

ջրախառնութեան եւ կամ ոչ էր ամենեցուն ի գործ ածեալ»<sup>16</sup>: Հ. Մինաս Բժշկեանը եւս իր աշխատութեան մէջ անդրադարձել է Հռոմէական Կաթոլիկ Եկեղեցու գահակալների գաւազանագրքին՝ յականէ յանուանէ տալով ամէն մի Պապի համառօտ կենսագրականը: Մասնաւորապէս Բ. դարում գահակալած Աղեքսանդր Պապի մասին նա գրում է. «Աղէքսանդր հռովմայեցի որդի Աղէքսանդրի՝ յաջորդեաց գեարքիստոս յաթոռ քահանայապետութեան Հռովմայ յամի 121...: Հաստատեաց կոնդակաւ ընդ այլ կարգաց եւ գիտառումն ջրոյ ի բաժակ պատարագին յառաքելական աւանդութեան»<sup>17</sup>: Անշուշտ, Հռոմի Աղեքսանդր քահանայապետը պատմական անձնաւորութիւն է, բայց նրան վերագրուած վերոգրեալ տեղեկութիւնն արժանահաւատ չէ. այս գրուածքը կեղծ է, գերծ պատմական որեւէ հիմնաւորումից, ուստի եւ անիմաստ է նրա հիման վրայ ինչ-որ եզրակացութիւններ անելը: Անկախ ամէն ինչից, նմանատիպ կեղծ գրուածքների ի յայտ գալն անգամ խօսում է անապակ կամ խառնեալ բաժակի խնդրի շուրջ միջնադարեան տարակարծութիւնների եւ վաղ Եկեղեցում կենցաղավարած խառնեալ կամ անխառն գինով պատարագելու աւանդութիւնների մասին:

Հ. Միքայէլ Չամչեանը յատուկ շեշտադրութեամբ անդրադառնում է նաեւ Վերնատան աւանդութեանը, որն անապակ բաժակով պատարագելու Հայոց Եկեղեցու սրբազան աւանդութեան հիմքերից է, քանզի Ս. Հաղորդութեան խորհրդի հաստատման անդրադառնալիս ո՛չ աւետարանիչները եւ ո՛չ էլ Պօղոս առաքեալը ջրի մասին չեն յիշատակում<sup>18</sup>: Հայկական սկզբնաղբիւրները վկայում են, որ է. դարի վերջին եւ Ը. դարի սկզբին արդէն Ստեփանոս Սիւնեցին, Յովհան Օձնեցին եւ Խոսրովիկ Թարգմանիչը ոչ միայն խօսում են Քրիստոսի կողմից ջուր չօգտագործելու մասին, այլեւ ընդգծում բաժակի անապակ լինելը: Հայոց Եկեղեցու աստուածաբանական մտածողութեան համաձայն՝ Աւետարանից դուրս մնացած ամէն ինչ արդէն մեկնաբանութեան ծիրում է: Հ. Միքայէլ Չամչեանի համար յստակ է, որ Քրիստոս Ս. Հաղորդութեան խորհուրդը հաստատելիս գործածել է գինի,

16 Անդ, 46:

17 ԲԺՇԿԵԱՆ, Հ. Մ., *Սրբազան պատմութիւն*, հտ. Բ., Վեներիկ 1838, 12:

18 ԲԱՂՈՒՄԵԱՆ, Զ., *Վերնատան Աւանդութեան ընկալումը Հայոց Եկեղեցում*. «Էջմիածին» 2012, քիւ ժԱ, 9-18, Նոյն, *Անապակ բաժակի...*, նշ. աշխ., 80-95:

որ ստացուում է որթատունկի բերքից: Ընդդիմանալով հռոմէական վարդապետութեանը՝ Չամչեանը նշում է, որ աւետարանիչները կողմից գործածուած «քաժակ» բառն այստեղ գինին է եւ ոչ թէ ամանը, որի մէջ խառնուում են ջուրը եւ գինին<sup>19</sup>: Հետեւելով Ս. Գրիգոր Նարեկացուն՝ Սաղմոսաց գրքի մեկնիչը խորհրդանշական տեսանկիւնից անապակ գինին համեմատում է Աստծոյ անեղծ եւ անխառն սիրոյ հետ՝ պաշտպանելով կրկին այս հարցում Հայ Եկեղեցու տեսակէտը<sup>20</sup>: Քանզի ինչպէս Աստծոյ սէրն է մաքուր եւ անխառն, այնպէս էլ պէտք է լինի Ս. Հաղորդութեան խորհրդում գործածուող գինին:

Չամչեանը Վերնատան Աւանդութիւնը քննում է հետեւեալ հարթութիւնում՝ Քրիստոս Վերջին ընթրիքին անապակ գինի գործածեց, թէ՞ ջրախառն: Նա ընդգծում է, որ այս հարցում ամէն Եկեղեցի ջատագովում է խնդրի վերաբերեալ իր տեսակէտը, ցոյց տալիս դրա աստուածաբանական հիմնաւորումները՝ պնդելով, որ սա առաքելական կամ տէրունական աւանդութիւն է: Ի վերջոյ՝ կարելորդ ոչ թէ անխառն կամ խառնեալ գինով պատարագելն է, այլ այն գիտակցութիւնը, որ գինին դառնում է Տիրոջ ճշմարիտ եւ իրական արիւնը, ուստի մնացած մեկնաբանութիւններն առաւելապէս տարբեր աստուածաբանների տեսակէտներն են: Ըստ նրա՝ անգամ Կաթոլիկ Եկեղեցու հրեշտակային վարդապետ Թովմա Աքուինացին է թէաբար մօտենում այս հարցին: Վերնատան Աւանդութեան մասին իր կարծիքը Միքայէլ Չամչեանն աւարտում է հետեւեալ եզրակացութեամբ. «Բան Աւետարանին ի կողմն Հայոց է, եւ այլուստ չիք հաստատուն վկայութիւն, այլ կամ կարծիքական, կամ յետնոց յօդեալ մանաւանդ թէ կան այնպիսի վկայութիւնք, որք ապացուցանեն, թէ սոսկ եկեղեցական աւանդութիւն է ջուրն եւ ոչ իւրիք առաքելական կամ տէրունական»<sup>21</sup>:

19 ԶԱՄՉԵԱՆ, Հ. Մ., *Մեկնութիւն Սաղմոսաց*, հտ. Գ., Վենետիկ 1817, 197, (այսուհետ՝ *Մեկնութիւն Սաղմոսաց*) նաեւ՝ ԲԱՂՈՒՄԵԱՆ, Զ. Վրդ., *Ամապակ քաժակի խնդիրը Հայոց Եկեղեցում*, 83-86:

20 *Մեկնութիւն Սաղմոսաց*, 197-198: Ս. Գրիգոր Նարեկացին «Աղօթամատեանի» Սրբալոյս Միռոնին նուիրուած գլխում ասում է. «...իւղոյդ փրկութեան անապակ գինեաւ սիրոյդ՝ միութեամբ արարչականաւ» ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ, *Մատեան ողբերգութեան*, աշխատասիրութեամբ Պ. Խաչատրեանի եւ Ա. Ղազինեանի, Երեւան 1985, Բան ՂԳ, 622, տ. 108-109:

21 *Վահան հաւատոյ*, 52:

Վերոբերեալ մի քանի վկայութիւնները փաստում են, որ Հ. Միքայէլ Զամչեանը ոչ միայն պաշտպանում է անապակ բաժակի Հայոց Եկեղեցու սրբազան աւանդութիւնը եւ դարերով ամրագրուած ծիսական այս սովորութիւնը, այլեւ միւսներին յորդորում յարգանքով մօտենալ դրան, քանզի այն հաստատուել է Հայոց ազգի հաւատքի հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի կողմից։ Ուստի, ովքեր ցանկանում են առաւել մանրամասն տեղեկանալ այս մասին, պէտք է ուսումնասիրեն հայկական սկզբնաղբիւրները՝ ճշմարտութիւնը բացայայտելու եւ իմանալու համար։

ԶԱՔԱՐԻԱ Ծ. ՎՐԴ. ԲԱՂՈՒՄԵԱՆ

### Summary

## FATHER MIK'AYEL ČAMČEAN AS THE DEFENDER OF THE SACRED TRADITION OF UNMIXED CHALICE OF THE ARMENIAN CHURCH

ZAKARIA vrd. BAGHUMYAN

The Armenian Apostolic Church is the only Church in Christendom that does not add water to the chalice of wine during the Divine Liturgy. According to Armenian sources, this Sacred Tradition was established by the Father of faith St. Gregory the Illuminator, who had taken this liturgical rite from the Ancient Church. Obviously, St. Gregory also took into account the Armenians' practice of drinking pure wine at their homes for ages.

The usage of mixed or unmixed chalice becomes an issue for discussion and controversy in Christ's Church, when liturgical practices of different Churches receive theological, philosophical and symbolic explanations. It is natural for every Church to defend her liturgical tradition based on the Holy Scriptures, writings of Church Fathers, canonical decisions of Councils, etc. The Armenian ecclesiastical literature is full of writings about this problem, in which fathers and patriarchs of the Armenian Church show the others the theological and symbolic explanations on this matter based again on the Holy Bible, Patristic literature and the decisions of local National-Ecclesiastical Councils.

So, one of the defenders of this Sacred Tradition is Fr. Mik'ayel Čamčean, a monk of the Mexit'arist Congregation, theologian, historian and philosopher. He defended the position of the Armenian Church's theological thinking against the Latinophiles showing the "Orthodoxy" of the Armenian Church. He tried to solve the disputes among the members of the Armenian Apostolic and Catholic Churches in Constantinople, showing that the Armenian Church was not heretic, as it was frequently portrayed at that time, and there was no need to shock the Armenian nation with new quarrels. He wrote "Shield of Faith", a theological work of some 1000 pages during four decades (1776-1815), which confirms the Orthodoxy of the Armenian Church beginning with St. Gregory the Illuminator. Unfortunately, a Catholic priest robbed the book and took it to Rome, where it

had the impact of a bomb. After four years of discussions and debates, the book was forbidden by the Propaganda Fide and only its short and edited version was published later, after the author's death in Calcutta in 1873. He dedicated a separate chapter to this problem in this work, emphasizing the importance of Armenian sources to understand the position and theological thinking of the Armenian Church. Besides, he referred to this problem in his "History of Armenia" and "Commentaries of Psalms".